



Մանվել Սարգսյան. L.Տեր-Պետրոսյանի պատկերացումները հարվածում են ժողովրդավարության համար պայքարին

Հունիս 21, 2010

Ներքաղաքական իրավիճակի ու հնարավոր ելքերի մասին NEWS.am-ը գրուցել է Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի փորձագետ Մանվել Սարգսյանի հետ:

Ինչպե՞ս եք գնահատում ներքաղաքական իրավիճակը Հայաստանում: Վերջին տարիներին ի՞նչ ուղղությամբ են զարգացել գործընթացները և ինչի՞ են հանգել:

Շուրջ երկու տարի ներքին քաղաքականությունը հայ-թուրքական գործընթացի ազդեցության տակ է եւ ներքաղաքական կյանքի ամեն ակտիվացում կամ թուլացում կապված էր հենց դրա հետ: Իշխանություններին հաջողվել է ներքին քաղաքական կյանքի վզին փաթաթել հայ-թուրքական գործընթացը: ՀԱԿ-ը, որպես առանցքային ընդդիմադիր ուժ, եւս իրեն կապել է հայ-թուրքական եւ ԼՂ խնդիրներին: Շուրջ 1,5 տարի է, որ հենց այդ խնդիրների գաղափարական ֆարվատորի մեջ է դրսևորվում ընդդիմությունը: Մի կողմից առաջ քաշելով թեզը, թե մինչեւ ԼՂ խնդիրը չլուծվի, հայ-թուրքականը չի կարգավորվի, մյուս կողմից անընդհատ տարածվում էին թեզեր, թե իշխանությունները դրսից ճնշումների տակ են եւ ստիպված են լինելու ԼՂ հարցում ինչ-որ զիջումներ անել, որից ելնելով էլ ակտիվության կոչեր չէին արվում եւ պասիվություն էր քարոզվում:

Պատճառ էր բերվում, որ կերպ պետք չի բարդացնել իշխանությունների խնդիրը, որպեսզի նրանք անհարկի զիջումների չգնան: Իսկ դա, փաստորեն բերել է ստագնացիայի, ինչն էլ իր հերթին առաջ է բերել բանավեճ հասարակության ընդդիմադիր հատվածում եւ անգամ ՀԱԿ-ի ներսում: Այս բանավեճի պատճառը ՀԱԿ-ի որդեգրած վերը նշված թեզերն են: Մի կողմը գտնում է, որ այդ մոտեցումները թուլացնում են շարժումը, վերացնում ժողովրդական շարժումը, մյուս կողմն էլ հակառակն է պնդում: Այն հանգամանքը, որ այս ամիսներին շատ դաժան դեպքեր եղան Ղրղըզստանում, եւս նպաստեց այդ բանավեճի ընդլայնմանը, եւ նոր թեզեր առաջ եկան: Հարց առաջացավ, թե որքանո՞վ են ճիշտ ապստամբությունն ու հեղափոխությունը, սկսեցին զուգահեռներ տանել, ինչը աշխուժացրեց քաղաքական միտքը, որովհետեւ բոլորն էին գտնում, որ մի կողմից այդ բունտային ձեւերն անընդունելի են Հայաստանի համար, մյուս կողմից խոսվում էր, որ ընդդիմության դերը շատ մեծ է նման գործընթացներում: Ես ինքս էլ մի քանի անգամ ասել եմ, որ ծանր սոցիալական վիճակում, երբ ընդհանրապես մարդկանց իրավունքները ճնշված են, հենց ընդդիմության դերն է շատ մեծ, որ թույլ չտա երկիրը գա բունտային վիճակի: Ես կարծում եմ, որ հենց Ղրղըզստանում նորմալ ընդդիմադիր ուժերի բացակայությունն էր, որի պատճառով վիճակն ավերից դուրս եկավ: Այսինքն ամեն անգամ չէ, որ եթե ընդդիմությունը փորձում է ետ քաշել ժողովրդին, դա բերում է դրական երեւույթների: Լինում է այնպես, որ ժողովուրդն ինքն է սկսում որոշումներ ընդունել:

Իսկ ինչո՞վ են պայմանավորված ՀՀԵ-ում տեղի ունեցող զարգացումները: Ինչո՞ւ դրանք հենց այժմ սկսվեցին:

ՀՀ-ում ստեղծված վիճակն անհասկանալի է շատերի համար: Մարդկանց ասում են, որ մթնոլորտ է փոխվել, եւ դրա համար գնացել են այդպիսի քայլերի, բայց այդպես էլ չի պարզաբանվում, թե ինչ մթնոլորտ է ստեղծվել: Ես կարծում եմ, որ ցանկացած մթնոլորտ նման խոշոր կուսակցությունում կարող է կապված լինել հենց նրա հետ, թե որքանով են ընդդիմության կողմից վարվող քաղաքականությունը, պայքարի ձեւերը ընկալվում շարքերի կողմից: Եթե դրանք անընդունելի են եւ կան տարածայնություններ, անպայման այդ մթնոլորտը ստեղծվելու է: Սա հենց իմ նշած ստագնացիոն վիճակի արտացոլումն է: Հնարավոր չէ, որ դու հստակ խնդիրներ դնես ու այդպիսի մթնոլորտ ստեղծվի: Նման մթնոլորտ ստեղծվում է այն ժամանակ, երբ հարցերի պատասխանները չկան:

Իսկ ինչպե՞ս կազդեն ՀՀ-ում տեղի ունեցող զարգացումները ՀՀ-ՀԱԿ հարաբերությունների վրա, եթե նկատի ունենաք, որ ՀՀ-ն ընդունված է համարել ՀԱԿ-ի ինտելեկտուալ հենքը:

Իհարկե, ՀՀ-ն Կոնգրեսում ամեն ինչ է: Այս իրավիճակը հնարավոր է նոր ֆիզուրներ ասպարեզ բերի ՀՀ-ի ղեկավար կազմում, բայց այսպես թե այնպես մարդիկ պետք է իրենց վերաբերմունքը ցույց տան տարվող ուղեգծի նկատմամբ: Ես չեմ տեսել, որ ՀԱԿ-ի կողմից տարվող ուղեգծի վերաբերյալ հստակ դրական վերաբերմունք ցույց տա այդ գործիչներից որեւէ մեկը: Կարող են պատճառներ գտնել ներկա վիճակի համար, բացատրել իրավիճակը, բայց հասարակության շատ անդամներ խնդիր են դնում, որ իշխանափոխության հռչակված գործընթացը, ռեժիմի դեմ պայքարն արդեն գոյություն չունի: Ես ինքս էլ կարծում եմ, որ մարդիկ ճիշտ են ասում, որ փաստորեն այդ հարցը քաղաքական ասպարեզից հանվել է՝ պատճառ բռնելով հայ-թուրքական եւ ԼՂ խնդիրները: Շատերը դա գիտակցում են ու չեն հասկանում, թե ինչու է հանվել:

Իսկ ՀՀ-ի պառակտվելու վտանգը, կամ ՀԱԿ-ից դուրս գալու հնարավորությունն իրական համարո՞ւմ եք:

Պառակտման խնդիր չկա, ուղղակի ղեկավարությունն է փոխվելու: ՀՀ-ում երբեք գաղափարական ներքին տարածայնություններ չեն եղել, 15-20 տարի նրանք նույն թեգերն են առաջ քաշում Հայաստանի ու նրա խնդիրների մասին: Խնդիրը միայն կապված է Կոնգրեսի այսօրվա մարտավարությանը համաձայն լինել-չլինելու հետ:

Ինչպե՞ս եք գնահատում ընդդիմության պասիվ կեցվածքը: Կիսո՞ւմ եք կարծիքը, որ հասարակությունը նոր ընդդիմության կարիք ունի, որը նոր խնդիրներ կդնի եւ կլուծի:

Բանն այն է, որ մարդիկ ցանկանում են տեսնել մի ուժ, որը այն խնդիրը, որը դրվել է 2008-ին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից, բայց հետո հանվել է, նորից կդնի: Շատերը գտնում են, որ իշխանափոխության խնդիրն այսօր օրակարգից հանվել է, դրա համար էլ նոր ուժի մասին են խոսում: Բազմաթիվ մարդիկ այսօր տարբեր բանավեճերում ասում են, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի պատկերացումները, ընդհանուր փիլիսոփայությունը, երբ ամեն ինչ կապվում է արտաքին գործոնների հետ, հարվածում են ժողովրդավարության համար պայքարին եւ ժողովրդավարական շարժմանը, որը սկիզբ է առել 2008-ին: Այսինքն նրանք մեղադրում են, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն ինքը հավատարիմ չէ իր կողմից սկսած պայքարին: Դրա համար էլ հնչում են տեսակետներ, թե քանի որ ռեժիմը փոխելու խնդիրը չի կորցրել իր հրատապությունը, պետք է շարժումը նոր ձեւեր գտնի դրան հասնելու համար, ոչ թե պատճառ բռնելով արտաքին գործոնները, պասիվության կոչ անի: Ու եթե այդ ուժը դա չի անում, պետք է գա նոր ուժ, որը դա կանի: Այս խնդիրը լայնորեն քննարկվում է ամեն տեսակ սոցիալական ցանցերում, հանդիպումներում եւ շատ լուրջ է:

Թեև ՀՅԴ-ն վերջերս հայտարարեց, որ իշխանափոխության պահանջ է դնում, սակայն նա շարունակում է ավելի շատ ընդդիմադիր լինել ՀԱԿ-ին, քան իշխանությանը: Ինչպիսի՞ դիրք է գրավում նա քաղաքական դաշտում եւ ի՞նչ քաղաքական կշիռ ունի ներկայումս:

Հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված ՀՅԴ-ի համար ստեղծվել էր մի իրավիճակ, որ նա չէր կարող շարունակել մնալ կոալիցիայում, որովհետեւ դա կհարվածեր իր գաղափարական հենքին ու կսպառնար նրա գոյությանը: Ու քանի որ ՀԱԿ-ի պասիվությամբ պայմանավորված, դաշտ էր բացվել, ՀՅԴ-ն լցրեց այդ դաշտը, բայց մնաց հայ-թուրքական գործընթացի շրջանակներում: Նրանք ընդդիմություն են միայն մեկ հարցում, ինչը շատ անհասկանալի ու անորոշ վիճակ է ստեղծել, որը շատերի կողմից չի ընկալվում: Եթե դու իշխանափոխության խնդիր չես դնում, սոցիալ-քաղաքական խնդիրներ չես դնում, եթե մարտի 1-ի հարցով իշխանությունների դիրքորոշումն ունես, եւ ընդամենը մի նեղ հայ-թուրքական հարցում ես ընդդիմանում, քեզ ոչ ոք ընդդիմադիր չի համարի: Դրա համար էլ այդ ուժը այսպես կախված մնացել է: Որքան ես գիտեմ, իրենք ներսում էլ ունեն խնորումներ, որտեղ շարքերը միանշանակ չեն ընդունում այդ դիրքորոշումը: Մյուս կողմից, ես կարծում եմ, որ ՀՅԴ-ն ճիշտ է գնահատում իր ազդեցությունը քաղաքական կյանքում եւ գիտի, որ եթե անգամ իշխանափոխության հարց դնի, իր սեփական հաջողությունները կարող են շատ փոքր լինել: Կարող է դու հարցը դնես, ուրիշը հաղթի: Հենց այս մոտեցումն է, որ ստիպում է ՀՅԴ-ին այսպես օդում կախված մնալ:

Իսկ սա ո՞ւր կտանի Ղազնակցությանը:

Ոչ մի տեղ էլ չի տանի, այդպես կախված էլ կմնան: Մյուս կողմից, եթե ՀԱԿ-ը շարունակի իր այսօրվա մոտեցումները, ապա շատ ավելի մեծ զանգված է անորոշության մեջ հայտնվելու եւ շատ հնարավոր է, որ եթե ընտրություններ լինեն, այդ զանգվածի մի մասը կանցնի «Ժառանգությանը», մյուս մասը` ՀՅԴ-ին: Պետք է հաշվի առնել նաեւ, որ նույն ՀՅԴ-ն ընտրությունների ժամանակ, չեն կարծում, որ նման ձեւով իրեն պահի: Բնական է, որ արմատական լոզունգներ են հնչեցնելու, հիշելու են օլիգարխներին եւ դրա շնորհիվ իրենց 5-7 տոկոսը ստանալու են:

Կրկին ակտիվացել են արտահերթ ընտրությունների մասին խոսակցությունները: Ինչո՞վ է դա պայմանավորված, եւ եթե ընտրությունները լինեն հերթական, ի՞նչ կոնֆիգուրացիա կլինի խորհրդարանում:

Շատ բան կախված է, թե ինչպես իրենց կղրսետորեն ընդդիմադիր ուժերը, քանի որ իշխանությունների վարք ու բարքում ոչինչ չի փոխվել ու չի փոխվելու: Այն միակենտրոն ընդդիմությունը, որը կար 2008-ին, ներկա պայմաններում սպասելի չէ, որ կլինի: Այդ դաշտը սեկտորների է բաժանվելու: Այլ բան է, եթե ընդդիմությունը որակական փոփոխության ենթարկվի: Օլիգարխիայի դեմ պայքարը բարդ բան է: Դա ավտորիտար համակարգ չէ Շեւարդնաձեի կամ Բակիելի իշխանության նման, որ փչես` փլուզվի: Դա արմատավորված համակարգ է, գյուղերից սկսած մինչեւ վերեւ, պայմանավորվածությունների հիման վրա` ահռելի մարդկանց ստրկացրած: Նման բիրտ ուժը ոչ մի բանի առաջ չի կանգնում: Նրանց դեմ դուրս գալու համար նոր որակի ուժ է պետք, որը կարող է պարտադրել այդ բիրտ ուժին` իրեն զուսպ պահել եւ ընտրություններում եւ դրանցից դուրս: Ես կարծում եմ, որ Հայաստանում պետք է գիտակցվի, որ ավելի կանոնավորված, ավելի ռիսկով, ավելի խիստ

վերաբերմունք ունեցող եւ համապատասխան կադրային հիմք ունեցող ուժ է պետք, որի դեմ գործող համակարգն ընկրկի:

20-րդ դարի երկրորդ կեսին շատ երկրներում եղել են նման փոփոխություններ, երբ ասպարեզ են եկել ուժեր, որոնք ասել են՝ «Մեզ հետ կատակ անել չի լինի», եւ այդ ուժերի հետ ուժային դիրքերից խոսելը դժվարացել է: Նման ուժերի վրա կրակելը շատ վտանգավոր է դարձել իշխանությունների համար, որովհետեւ նրանք իրենց դրվածքով, կազմակերպվածությամբ ու գործելաճով կարողացել են համոզել իշխող օլիգարխիկ էլիտային, որ ձեւեր կգտնեն իրենց պատժելու: Երբ նրանք կարողացել են համոզել, որ կատակ չեն անում, արդեն օլիգարխիան գնացել է բանակցությունների: Օլիգարխիան երբեք բանակցությունների չի գնա, եթե գիտի, որ անպատիժ է մնալու: Նրանք գնում են բանակցությունների եւ անգամ որոշ դիրքեր են հանձնում, երբ հասկանում են, որ պատժվելու են:

Իսկ եթե այսպես գնա, ի՞նչ պատկեր կունենանք նոր խորհրդարանում: Ասում են, որ ՀՀԿ-ն որոշել է միանձնյա իշխանություն ձեւավորել:

Օլիգարխիան եթե անպատիժ է, կարող է որոշել եւ 101 տոկոս ձայն վերցնել: Սկզբում կգրեն 130 տոկոս, հետո կիջեցնեն 100: Ինչ վերաբերում է ՀՀԿ-ԲՀԿ պայքարին, ապա դա եւս օլիգարխիայի տրամաբանության մեջ է: Օլիգարխիան հենց տարածքների բաժանված ուժեր են, կլաններ, որոնց համար հասարակությունը ընդամենը մի կլան է: Դրա համար մեկ-մեկ միանում են, հասարակության դեմ կռվում, բայց նրանք այդ կռիվը շարունակում են ներսում: Հայաստանում ամեն ինչ բաժանած է տարածքների եւ ամեն մեկը ձգտում է իր վերահսկողությունը հաստատել գոնե իր տարածքում՝ փորձելով լայնացնել այն: Այս տրամաբանությունը փոխվում է միայն այն ժամանակ, երբ հասարակությունը կազմակերպված քաղաքական ուժի միջոցով ստիպում է նրանց կանգ առնել եւ վերանայել իրենց մոտեցումները: Եթե ստիպող չկա, նա շարունակելու է իր տոտալ պայքարը մինչեւ վերջ: Այդ մարդկանց համար նույնիսկ 99 տոկոսն էլ է անհաջողություն:

Իսկ ինչպե՞ս եք գնահատում այն բազմաթիվ շարժումները, որոնք առաջ են եկել Ուսանողական այգու, օտարալեզու դպրոցների, «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը պահպանելու խնդիրների հետ կապված:

Իսկապես, հասարակության մեջ առաջ են եկել առանձին շարժումներ, որոնք նոր մոտեցումներ են ներկայացնում: Հասարակության առանձին հատվածներ արդեն սկսում են ակտիվություն ցուցաբերել կոնկրետ հարցեր լուծելու առումով: Սրանք արդեն քաղաքացիական պայքարի նոր ձեւեր են, որն ընդամենը սկիզբն է: Հենց դա է ստեղծելու այն նոր որակներով ուժը, որը գուցե կարողանա դեմ դուրս գալ օլիգարխիային: Անգամ էական էլ չէ, թե ՀԱԿ-ում ինչպես են նայում դրան: Կարող են աջակցել, կարող են չաջակցել, բայց այս շարժումները արդյունքն են 2008-ի շարժման, որը հասարակական գիտակցության մեջ հզոր վերելքի է բերել, եւ հիմա մենք դրա դրսևորումներն ենք տեսնում: Շատ վատ է, որ Կոնգրեսի ղեկավարությունը չի օգտագործում այդ շարժումները՝ վերափոխելու համար իր գործունեությունը: Կարծես ՀԱԿ-ը մնացել է 2008-ին, այնինչ նոր իրավիճակը նոր խնդիրներ ու նոր լուծումներ է պահանջում:

Զրուցեց Արթուր Խենջյանը